


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համ. 10 Մէճ.
Գաւառաց. 2 1/2 իրա
վեցամս. Կ. Պոլսոյ 3 Մէճ.
Գաւառաց. 1 1/2 իրա
Օտար երկիրներու 50 Ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :
Եւրաքանչիւր թիւ 40 փարս արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած քաղաքի հանրա-
ժապարկական տնային գին :
Եւրաքանչիւր փարս արծ 2 1/2 իրա
կամ արծ 1 իրա : Գրաւորութիւն
— Տնօրէնին արտի տնային Կ. Պոլս.
Յիս Սանտրոքըրար շառաւիղի թիւ
198, Նօրօ խան Կ. Սանտրոքըրար
տնային :
Հանրա ծախքը չվճարուած հա-
մար չընդունուիր :
Չտարած համակ, յողում, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երկրական տնային գինը շարունակ
նախկին օր քան զօր դժբաղդարար
աւելի ստատիկ կերպով արագ կ'աւ-
նու : Եւրոպայի նախարարութիւնը
պահանջած էր որ մաքսերու, հե-
ռագրաց և քաղաքացիութեանց
հասոյթները գանձը զրկուին, որպէս
զի թոշակներն հաւատարմեամբ
վճարուին, բայց յիշեալ պաշտօնա-
տունք զիտողութիւն ըրին թէ այս
միջոցն իրենց ներքին վարչութիւնն
անկարգ վիճակի մէջ կը ձգէ : Դեռ
պանառուները ծանուցին Բ. Դրան
որ եթէ հեռագրատանց հասոյթը
Մարիէն երթայ, յիշեալ պաշտօնա-
րանին բարեկարգութիւնը կը խան-
գարի և Եւրոպայի հետ հաղորդակ-
ցութիւնը կը դադարէ : Հեռագրա-
կան պաշտօնատունն իւր հաշիւները
կանոնաւոր կերպիւ կը պահէ և կան-
խիկ հասոյթ ունենալով թոշակներն
ամեն ամիս կրնայ վճարել, որով
կայսերական գանձէն խիստ աւելի
կանոնաւոր վիճակ մ'ունի. բայց երբ
իւր հասոյթները գանձն ժրթան, տարակոյս չիւյ որ անկարգութիւնը
պիտի տրե՛ն նաև այս ճիւղին մէջ :
Եւրոպայի հեռագրական վարչութիւնը
պիտի մերժեն Օսմանեան հեռագ-
րերն, և հաղորդակցութիւնը բոլ-
րովն պիտի չիթին : Մարիէն վար-
կըն արդէն ինկած է, իւր պարտքը
վճարելու վիճակի մէջ չլինելն յայտ-
նի է, և դաւառները քաջած ձէ-
վալներն, որք տեսակ մը փոխանա-
կագիր կը սեպուին, անվճար կը
մնան : Քանի մը պաշտօնատունք ի-
րենց հասոյթներն ուղղակի գանձե-
լով թոշակները կը վճարէին, և այս
պատճառաւ թուրքի մէջ գոնէ
կանոնաւորութեան օրինակ մը կ'ըն-
ծայէին, բայց ահաւասիկ անոնք ալ
միւս պաշտօնատանց վիճակին մէջ
լինալու վտանգին ենթակայ կը լի-
նին : Կ'երևի որ այս խնդիրը տակա-
ւին աւելի մնացած է : Քաղաքա-
պետութեան գլուխ ընդապէս հը-
րաժարական պիտի տայ եղեր եթէ
հասոյթներու նկատմամբ առաջադ-
րեալ որոշումն ի գործ դրուի : Մաք-
սերն ոչինչ նուազ կարեւորութիւն
ունին, բայց ներկայ որոշումը ա-
նոնք ալ պիտի խանգարին : Առ այ-
ժմ երկրական նոր պայմանագրու-
թեան շնորհիւ կայսերական գանձն
երեք միլիոն ֆրանքի փոխառութիւն
մը պիտի ընէ Ղալաթիոյ սեղանաւոր-
ներէն : Այս վտրքի փոխառութիւ-
նը չուտով կ'ապառի կայսերական
գանձուն ամբաւ պիտոյից առջև, և

անկէ վերջը կը մնայ նոր միջոցներ
խորհիլ դարձեալ երկրական ֆաւու-
սին մէջ նոր քայլ մ'առնելու հա-
մար : Բայց երբ պետի բարեկարգ
պիճակն — այս խնդիրը չկրնար մա-
թեմատիքական ճշգրտութեամբ լուծ-
ուիլ, և բաւական է ըսել թէ երեւ-
միայն բարեկարգութեամբ միջոցնե-
րու կարօտ է, և մանաւանդ լաւ
աշխարհավարութեան, լաւ վարչու-
թեան, ճիշդ երկրագոյցի գործադ-
րութեան, կանոնաւոր կազմակեր-
պութեան և հաշուակալութեան, ո-
րոյ տարրերն այժմ անգոյ են, կամ
այնչափ տկար և սակաւթիւ, որ
իրեն լաւ տունկեր խեղդուած են
վայրի թուփերու մէջ :

Ռուսական թերթերն Եւրոպական
ընդդիմութիւններէն ձանձրանալով
սկսան թուրք-Ռուս դաշնակցու-
թեան մը վրայ խօսիլ : Նոյնի վրէ-
միս լրագիրը կըսէ թէ 1856 ին մեծ
տէրութիւններն անկեղծօրէն կը բաղ-
ձային Օսմանեան տէրութիւնը վե-
րահաստատել, իսկ այսօր կը մտածեն
թէ ինչ եղանակաւ կրնան օգուտ
քաղել անոր անկումէն : Բայց Ռու-
սիոյ բարեկամութիւնը կը նմանի այն
կենդանուն բարեկամութեան, որ
թշնամութեան աւելի վտանգաւոր
եղաւ իւր սիրելւոյն, քան թշնա-
միւն մը խորշիկ կարելի է, բայց ինք-
նակոյ մտերիմ բարեկամէ մ'ինչպէս
կարելի է խորշիկ առանց իւր ան-
կեղծութիւնը կասկածի ենթարկելու :
Ռուսական թերթը կը բաղձայ թուր-
քիոյ դաշնակցութեան և բարեկա-
մութեան, Այսու ամենայնիւ Եւրո-
պական տէրութիւններէն աւելի հա-
ւատ չ'ընծայեր թուրքի վերական-
գանութեան, ջարմանալի բարեկա-
մութեան, որ դաշնակցի մ'ապագա-
լին և վերականգնութեան վրայ ան-
վստահութեամբ կ'սկսի : Ռուս թեր-
թերը դժուարակեցութիւն կը յայտնէին
նաև Բարձր. Մահմուտ Նէտիմ փա-
շայի նախարարութեան պաշտօնի կոչ-
ուելուն վրայ :

Հասարակային ապահովութեան
խնդրոյն վրայ Բ. Դրան կողմէ դա-
ւառական իշխանութեանց զրկուած
մէկ նոր շրջաբերականին իմաստն
հրատարակեցինք մեր երէկուան թը-
ւով : Գիտադաբար չեմք կարծեր
որ մեծ արդիւնք մը կարենայ սպաս-
ել կառավարական այս նոր շրջա-
բերականէն : Քանի որ ո՛ր է միջոց
ձեռք չէ առնուած Օսմանեան Սիւր-
դէթ քանի մը մասնաւոր գաւառաց
պաշտօնատարութիւնը բարեկարգ
որոշ միջոցաւ մէկ կողմէ անկար-
գութեան տարեքնն այնքան բաղ-
մաթիւ են, միւս կողմէն կառավա-
րական պաշտօնատարք իրենց յոռու-

թեամբ նշանաւոր եղած են, և մին-
չև որ օրէնքը, հաւատարմութիւնն ու
անկողմնակալութիւնն այդ գաւառ-
աց մէջ իրենց բուն նշանակութիւն-
նը չ'ստանան, չկրնար յուսացուիլ
որ ամեն մէկ նահանգի, գաւառի և
աւանի մէջ գործուած ոճրագործու-
թիւնը ճշգրիտ պիտի տեղեկագրուին
կեդրոնական կառավարութեան և
անոնց հեղինակները պատժուին :
Այս կանոնին հակառակ վարուող
պաշտօնատարները պատժուած սպա-
նալեաց դալով, երբ յայտ յանդի-
ման ամեն գեղծում և անիրաւու-
թիւն գործող և բարենորոգմանց բա-
յրաձակագէս ընդդիմութիւն ընող
բազում գաւառական պաշտօնատարք
ոչ միայն չեն պատժուիր, այլ և
պարգաւատ պաշտօնանկ անդամ չեն
լինիր, պէտք չէ սպասել որ միւսին
պաշտօնատարք, տեղեկագիր մը չը
զրկած կամ պակաս զրկած լինելուն
համար պիտի ընդունին այն պատի-
ժը, զոր մինչև ցարդ չտեսան և այ-
սօր իսկ չեն տեսներ անհունապէս
աւելի ծանր յանցանաց համար :
Հաւանական է որ կողմնակալ ոգ-
ւով դրուած և խեղճութիւնը տե-
ղեկագրեր դան ժամանակ մը ներ-
քին գործող նախարարութեան, բայց
յայնժամ ուր աւանդութիւններն
ըն պիտի տեսնուին որ կեդրոնական
կառավարութիւնն երբ այդ տեղե-
կագրաց մէջ չարձանագրուած բայց
իրապէս տեղի ունեցած ոճրի մը վը-
րայ գանգաւ ընդունի, իւր ձեռքը
միջոց պիտի ունենայ բացէ ի բաց
մերժել զոյն յայտարարելով թէ դա-
ւառական իշխանութիւններէն եկած
տեղեկագիրք այդպիսի իրողութիւն
մը չեն պարունակեր, և կամ, եթէ
կը պարունակեն, գանգաւորութիւն
չափ ծանր հանգամանք մը չունին :
Այսպէս ահա, ինչպէս արդէն ֆո-
մաէրաց գործին մէջ և ուրիշ առիթ-
ներով տեսնուեցաւ, ի նպաստ բարե-
նորոգմանց եղած ամեն ձեռնարկը
անոնց իրականացման յոյսերն աւելի
տկարացնելու կը ծառայեն երկրին
գիտադաբութեան :

ԵԼՄՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՔԻՐ

Ինչպէս արդէն ծանուցինք, Բ. Դրան
և Օսմանեան Պանքային հետ գանձող
սեղանաւորաց խմբակի մը միջև ժա-
մանակէ մ'ի վեր բանակցութեան
նիւթ եղած երկրական պայմանագի-
րը վերջերս հաստատակեցաւ : Պաշ-
տօնական բնագիրն նայելով, այս
պայմանագիրը կնքած են՝ մէկ կող-
մէն Առաջին նախարար Սայիտ փա-
շան և երկրորդն նախարար Խալիպ
էֆենդին, և միւս կողմէն՝ ի դիմաց
Օսմանեան Պանքայի՝ Պ. Պ. Հ.
Ֆօթիթը, Լամիլ Տըլօ, Ժ. Ֆօն Հաստ
և Պանքային խմբակ Պ. Պ. Ժօրժ

Ջարիֆի, Սալամն Ֆէրիմանդը, Պէր-
նար թիւպին, Խալիպ Եֆենդին, թէ-
նաւոր Մամուր Բօրուք, Ս. Վլադ-
թօ, Ս. Պարքէր, Զ. Սթեֆանովիչ,
Լէօնիտաս Ջարիֆի, Ժօրժ Ֆօթիթ, և
Խալիպ Նէկրօօօնիթ և ֆոյ Ստեֆանօ-
վիչ Շիլցցի :

Ահաւասիկ պայմանագրին թարգ-
մանութիւնը :

ՅՕԳ. 1. — Կայսերական կառավա-
րութիւնը վերոյիշեալներուն վարձու-
կուտայ հետեւեալ տրոյ հաւաքումը
տան տարուան համար, այն է
1/13 յունվար 1880 էն մինչև 1/13
յունվար 1890 :

Այս տուրքերն են՝ դրոշմի տուր-
քը (վարձայն անգէն) և վարի ցանկին
համեմատ տէրութեան վիճակներ-
էն ունեցող երկրի ընդհանրաց Միլիոն
և թու խալիպէ տուրքերն ի բաց
տուեալ այդ բնակիչներէն աւան-
ւած մարտի տուրքը, նոյնպէս, մաս-
նաւոր ցանկին համեմատ՝ Կ. Պոլսոյ
և շրջակայից ձկնորսութեան տուրքն,
և մասնաւոր ցանկին համեմատ՝ Կ.
Պոլսոյ շրջակայից, Ագրիանապօլսոյ,
Պրոսպէրի և Սամսոնի մետաքսի տուր-
քն, ի բաց տուեալ մետաքսէն աւ-
նուած մարտի տուրքը :

ՅՕԳ. 2. — Վարձակալութեան բու-
լըր ժամանակին համար վարձուն
տարեկան գինը՝ ներկայ տարւոյս
մէջ՝ այսինքն 1879 մարտ 1/13 էն
սկսեալ մինչև 1880 մարտ 1/13, վե-
րոյիշեալ 4 տրոյ հիշեցնող ու մե-
թալիքով բերած դուռ հասոյթին
հաւատար պիտի լինի, և հարկերն
10 ալ աւելի :

Այս դուռ հասոյթն յառաջիկայ
օգոստոս ամսոյ սկիզբը պիտի որոշ-
ուի, պէշլիքով ու մեթալիքով եղած
հասոյթից դուռնային վերադիւնեալ
չորս տրոյ հաւաքման ընդհանուր
ծախուց գումարն հանելով :

Վարձակալը վարձուն գինը պէշլի-
քով ու մեթալիքով պիտի վճարեն
տարեկան տասներկու պայմանագրա-
մով և ամեն ամսոյ վերջը :

Վարձուն գնոյն վրայ դուռ հա-
սոյթին աւելցած ամեն գումար պե-
տութիւնն և պայմանագիրը հաւա-
սարապէս մէջերին պիտի բաժնեն :

ՅՕԳ. 3. — Վարձու տրուած չորս
տուրքերը պայմանագրաց կողմէ պի-
տի հաւաքուին՝ այս ամսին ի դուռ-
ձագրութեան եղող սակագնոց և
կանոնադրութեանց համեմատ, որք
երկու կողման համաձայնութեամբ
միայն կրնան փոխուիլ :

Գործին համար պէտք եղած դը-
րոշմներն և դրոշմաւոր զիջերը պոյ-
մանագրոց երկրորդ մասին ծախիւք
և հակադրութեանը ներքև լինելու
պայմանաւ իրենց պիտի տրուին կա-
ռավարութեան կողմէ :

Դրոշմի կիցու իւր գաղտնի ժա-

մանակ, անոր համար դորձածուած մեքենայներն ու գործիքները կրկին բանալիներու ներքեւ պիտի պահուին, որոյ մի կառավարութեան ձեռքը պիտի մնայ և միւր պայմանադրոյց երկրորդ մասին ձեռքը: Վարձակալութիւնը դադարած Ժամանակ, պայմանադրոյց ձեռքը դառնում ընդդէմ դաշնադրութեան կառավարութեան պիտի վերադառնան:

Կայսերական կառավարութիւնն ի դորձադրութեան երկր կանոնաց համեմատ, պայմանադրոյց երկրորդ մասին ամեն օգնութիւն պիտի ընէ՝ վարձու տրուած առերեւոյն հաւաքման համար, և թէ՛ ներկայ կառավարութեան ճշդիւ դորձադրութիւնն ապահովելու նպատակաւ, և թէ՛ այդ տրուած հաւաքման եղանակը բարելոցելու համար՝ այդ կանոնադրոյց մէջ կարեւոր դատուած բարեփոխումները կատարելու նպատակաւ պայմանադրոյց կողմէ եղած ամեն առաջարկութիւն կայսերական կառավարութեան կողմէ ի հաշիւ պիտի առնուին:

807. Կ. — Վարձակալաց վարչութեան վրայ պետութեան հսկողութիւնը Բ. Դրան կողմէ անուանուած տեսչաց միջոցաւ ի դորձ պիտի դրուին:

Այս տեսուչը տուեմաները պիտի ընեն, բայց վարձակալաց վարչութեան միջամտելու իրաւունք չպիտի ունենան:

Պայմանագիրը արտօնութիւն կը վերապահեն թէ՛ վերոյիշեալ չորս տարւոյ վարձակալութիւնը բանեցնելու համար ընկերութիւն կազմելու իրենց մէջ, և թէ՛ իրենց վարձակալութիւնն երրորդաց յանձնելու: Բայց երկու պարագայից մէջ ալ իրենք ուղղակի պատասխանատու պիտի մնան կայսերական կառավարութեան առջեւ:

807. Յ. — Կայսերական կառավարութիւնն 1880 յունվար 1/13էն ըսկընելով առաջին յօդուածին մէջ յիշուած պայմանադրոյց կը յանձնէ՝ յանուն և ի հաշիւ պետութեան, այն աղի և ծխախոտի մեքենաշինարար վարչութիւնն, զորս վարի ցուցակին մէջ յիշուած վիլայէթները կ'արտադրեն կամ կ'ապահովեն ի բաց առեւտրական տառնորդը:

Պետութիւնն այս վարչութեան վրայ իւր հսկողութիւնն ի դորձ պիտի ընէ իւր կողմէն անուանեալ և ամեն պէտք եղած տեղեր այդ վարչութեան պաշտօնատարաց քով դըրուած տեսուչներու միջոցաւ:

Այս տեսուչը այդ մեքենաշինարար տուեմաները ընեն և սննդամթերքի ստուգելու իրաւունք պիտի ունենան: Բայց անոնց վարչութեան միջամտելու իրաւունք չպիտի ունենան:

807. Ը. — Այն փոփոխութիւնները, զորս կառավարութիւնը կ'ամբողջորդէ մասի պայմանագիրը հարկ պիտի համարին կատարել այդ մեքենաշինարար միջոցին կամ միւսին մէջ, երկու կողման համաձայնութեամբը պիտի որոշուին:

ՀԵՌԱՊՈԼԻՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 11 դեկտ.

Յիշատար Բեդֆորդը կ'ընեն հետեւեալ հետադիրը կը հրատարակէ՝ Պ. Վալուէթ երեսէ ինչու: Չարն անոր պատրաստած բարենորոգման ծրագրերը կը բաղդ նետեց ըսելով թէ քիչ քիչ գործի մարդիկ պէտք են և ոչ վարդապետութեան:

Լոնտոն 11 դեկտ.

Բապտիստ պատմաբան և Անգլիական դեպուտետ Ջորջ Էսկոն

վրայ Ռոյալ Սոցիալիզմի կողմէն քննարկ մասնախորհուրդն իւր գործն առնալով: Յիշուած մասնախորհուրդն այժմ պաշտօն յանձնուեցաւ՝ հասարակաց ապահովութեան համար օտարականութիւն մը կազմել:

Վալուէթի կողմէն տեղեկութեանց նայելով, Բիլլսոնայի մէջ ապստամբական շարժում մ'ենկելու երկիւղ չկայ:

Մէկ կողմէ կառավարութիւնը մեծապէս դուրս գրած աղբիւր կառուածոց վարձակալներուն և կարօտեցող օրորումներն ընելը քաջակերպով ժողովուրդը մեծապէս հանգարտեցուց:

Միւս կողմէն յուզմունք հանդերձ ալ սկիզբէն ջանացին որ շարժումը խաղաղական սահմաններու մէջ պահեն:

Վալուէթ 12 դեկտ.

Հասցեատէր թագաւորը Խալիֆին գիր մը գրեց, որոյ մէջ կը յայտնէ թէ ինք պատրաստ է խաղաղական դաշնադիր մը կնքելու, միայն թէ տէրութիւնը ճանչեն անոր պայմանները:

Բեդֆորդը 12 դեկտ.

Կայսրը պատգամագիր մը գրեց Շուալուֆի կողմէն աղաչելով որ անմիջապէս Բեդֆորդը քաջ իւր խորհուրդները տալով, միանգամայն Ունչակալութիւնը զըսկընելու դժուարին պաշտօնն ստանան:

Շուալուֆի կողմէն, որ ժամանակաւ իշխանութեան տակ է իրեն օտարականութեան նախարար, կայսր յիշատակագիր մը գրեց իւր մէջ Ներսիսի ընկերակցութեան նայ և Ռուսիոյ Ունչակալաց միջև կեցած յարաբերութիւնները կը ցուցնէ:

Ձրոյց կը պարտի նաև թէ Շուալուֆի կողմէն օտարականական նոր միջոցներ յանձնարարել է, որոցմէ մեծ արդիւնք կ'ըսկընուի:

Վիլհելմ 12 դեկտ.

Պաշտօնական տկուսններու մէջ կարծիք կայ թէ Վուսինի խնդիրը դորձնական լուծում մը պիտի գտնէ, և թէ քաղաքը Գարաապոլոսի պիտի տրուի, թէ՛ Մուսթաֆա փաշա խոհեմութեամբ կը շարժի իւր պաշտօնին կատարման մէջ:

Այս տեսուչը հասցէ հետեւին:

Կալիսթո 12 դեկտ.

Հնգամսեան փոխարքայ լորտ Լիթթըն այսօր քաղաքը հասած ժամանակ, մարդ մ'երկու անգամ կ'ողակըրտանոր վրայ, բայց չկրցաւ գործել: Ոճրագործն՝ որ Հնգիկ մ'է՝ բռնուեցաւ: Աֆղանստանէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ասան հազար Աֆղանք Քեթապիլի օտո Սեղդիական դորաց վրայ յարձակում ըրեր են: Անգղիացիք չորս թնդանօր կ'որոշան են, բայց յետոյ կրցեր են ետ առնուլ: Աֆղանք մեծ կորուստներ կրեր են, բայց Քեթապիլի չըրջակայ բարձրութեանց վրայ կը կենան:

Փարիզ 12 դեկտ.

Այսօրուան Պորտալին մէջ Գաղղիական արժեքի միջոց իշխան (Գաղղ. 8 070 108 էր) սա պատճառաւ է որ դատարան կան նախարար Պ. Լը Բոպլէի հրաժարման վրայ ահաբեկ նախարարութեան հաւաքարար հրաժարական տալուն երկիւղ կայ:

Երեսուցի ժողովն այսօր հասու թից երկուցոյցը քուէարկեց:

Լոնտոն 11 դեկտ.

Օտ. քան.	9 7/8
Փոխ.	4863 42 1/4
"	1869 42 1/8
"	1871 58 1/4
"	1872 48 1/4
"	1873 40 3/8
Եր. քան.	78 7/8
Անգլ. քան.	97 5/16

Փարիզ 11 դեկտ.

Գաղղ.	8 070	115,62 1/2
"	"	85,96

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքիս Աւստրիական նախարար Գեպպան Ջիլի կողմէն երէկ վերջնականապէս մեկնեցաւ Կ. Պոլսէն:

Վսեմ Աբրահամ փաշան և Եգիպտոսի Գաղղիական ընդհ. հիւպատոս և դորձակատար Պ. Տը Բէն չորեքշաբթի իրիկուն երկուցի կայսերական պալատն հրաւիրուելով՝ Վեհ. Սուլթանին հետ ճաշելու պատիւ ունեցան:

Պ. Տը Բէն երէկ մեկնեցաւ մայրաքաղաքէն:

Ալպանիայէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ ցուրար սաստկանալով՝ զինուորական շարժումները դադարեցնել հարկ եղեր է թէ՛ Գարաապոլոսի և թէ՛ Ալպանիացի կողմէ: Մուսթաֆա փաշայի զօրագուններն ալ իրենց ընթացքը դադարեցնելու հարկադրուին: Ալպանիացիք զլուխներուն դուռնուրումն ալ արդիւնք մը չէ ունեցեր՝ կարծեաց անհամաձայնութեան պատճառաւ:

Յունաց Պատրիարքն այս շարժում թաղարի մը գրեց Բ. Դուռը դաւառաց օրացի վիճակին և գործուած բազմաթիւ զեղծմանց վրայ, որոց առաջինն առնուլ համար քանի մը միջոցներ կառավարի:

Հասուն Գերապայժառն այսօր Վեհ. Սուլթանին պիտի ներկայանայ իւր օրէն յետոյ:

Վազըթ կը ծանուցանէ թէ կառավարութիւնը մէթալիք դրամը ընդլ որոշելով, պէտք եղած երկուս կան ձեռնարկները կատարել սկսած է: Երեք միլիոն ոսկի դուռնուր մը պիտի յատկացուի այս գործին, և մէթալիքներն հետզհետէ շրջաբերութիւնէ պիտի առնուին: Մէթալիք դրամին պատճառաւ ժողովուրդէն և կառավարութեան կրած վրեժանքն այսօր ինքնուրիկ կըսէ թուրք լրագիրն, այս երեք միլիոն ոսկի դուռնուրը չափազանց չէ:

Կառավարութիւնը մտադիր է այս դուռնուրը Ղալաթի սեղանաւորներէն փոխ առնուլ ինչ ինչ հասցիներ երաշխաւորութեան տալով:

Կըսուի թէ այս օրերս կեղծ լիւրներն ու մեծիտիներն տեսնուել են մայրաքաղաքիս մէջ, այնչափ վարպետութեամբ շինուած, որ խիստ դժուարին է ճանչել:

Բումբէիէն եկած լուրեր կը ծանուցանեն թէ Ռոսթոմ քան չորսը բնակեալ Քըրմալը կողուած իսլամները՝ կառավարութեան դէմ ապստամբելով՝ բազմաթիւ հրոսակաւորներու բաժնուեր և լեռան կրճերն ապստանելով կ'ամրանան:

Պալի-Փաշայի սարսափելի ոճրին հեղինակն, որ Ջիլաւիս փախչիլ կը փորձէր, նախորդ գիշեր Գարիսի մէջ օտարականութեան ձեռքն ինկաւ, բայց ընթացիկ հարուածով մը հարկաւորեց ծանրապէս վիրաւորելէ ետեւ՝ ուրիշ հարուածով մ'ալ ինքզինք սպաննեց: Միւս կողմէ կը լսեմք թէ Պալի-Փաշայի մէջ զարկած չորս անձերէն երկրորդ մ'ալ մեռեր է առած վերքերէն:

Հինգշաբթի իրիկուն Իսկիւսար լուսալաւոր Հայ երիտասարդ մը խառնութեամբ գողցել ետեւ ինքնուրիշ իւր տունը գնացած ժամանակ, Բոսթա-Խոլուի ճանքուն վրայ զօրականի կերպարանօք չորս հինգ մարդ վրան յարձակելով, քովը գտնուած 50-60 տակի կողոպտեցին:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈԼԻՍ

Է Ո Ն Ո Ւ Ր Ո Ւ Մ Ո Ւ Մ Է	
Կիւի իրիկուն ցուցեցաւ	40,34
Այս առաւօտ ցուցեցաւ	40,24
Կէս օրին	40,20
Բումբէի երկաթուղի	Քր. 34 50
Թղթաղում	Լր. 880

ԲՆԹԱՅԲ ԱՐԺԱՅԳԱՅԻՆ

Ի Դեկտեմբեր
Սուրբ Ե. Եւսեբիոսի բաժ. Անգլ. իր. 4,6
Փոխանակութեան 3,2

Փոխ.	1863	Ձր.	69
"	1865	"	58
"	1869	"	36
"	1872	"	17 20
"	1873	"	49
Թրամայ		Օտ. իր.	3 60

ԲՆԹԱՅԲ ԳՐԱՄՈՑ

1 Դեկտեմբեր

Անգլ. իր.	ար.	109 36
Նախօրէին ոսկի	"	87 16
Խալիֆի իր.	"	90 27
Գրքի միջ	"	51 40
Մէթալիք տարբերութիւն	"	6 31
Հինգ նոյ	"	18
Մէթալիք	"	18 20
Պոլսէն	"	360

Ա. Գ. Ա. Յ. Ի.

Ալպային ժողովն երէկ գումարեցաւ. Ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Զօր և տեսնապետութեամբ մեծ. Տ. Եւսեբիոս Էֆէսիոսի, բայց օրինական մեծամանութեան ներկայ չգտնուելուն պատճառաւ, օրակարգէն դուրս քանի մը խնդրոց, և Էֆէսիոս արապէս Տիգրանակերտի առաջնորդական խնդրոց վրայ բաւական երկար վիճարկութիւն եղաւ, և չկրնար ընդլ որոշում տրուիլ յաջորդ նստին թողուեցաւ, որ տան և հինգ օրէն պիտի գումարին:

Կը լսեմք թէ մայրէն պատկառութեան պատճառաւ Ալպ. Հիւսնդանցը բանտարկեալ Արզումանեան շնորհուակ Ստեփան վարդապետն անցեալ գիշեր փախեր է:

Ոսկերի Մեղքիսեղեկ աղա Տ. Ե. զիադարեան, Մեղքիսեղեկ Նիկողայ Էֆէսիոսի հայրն, երէկ իւր մահա նացուն կնքեց ի հասակի 96 ամաց:

Յուդարկաւորութեան հանգէսը վաղը պիտի կատարուի իւր տունը, (Լանկա Գարաալո-ճատտեփ) և մարմինն հանդիսաւ Մայր Եկեղեցին տարուելէ ետեւ՝ Պալատի գերեզմանատունը պիտի փոխադրին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍԻԼԱԳՐՈՑ

Տրամադրու 22 նոյ. 1879

... Խալաքարապետ Մասեաց:

Երեք տարի յառաջ դաւառիս գիւղերէն միոյն մէջ պատահած խժռոք ժամանակ դէպքը տակաւին Ձեր ընթերցողաց մտքէն ելած չէ:

Եթէ անի մինչև այսօր գնադատ մը չլսեցիք, մի՛ կարծէք թէ ժողովուրդը հանգիստ էր, այլ վստահ պատերազմի ժամանակ էր և ամեն մարդ կը վախնար ձայն հանելու: Երբ որ կէս է որ խաղաղութիւն եղաւ թողութիւն վրայ, սակայն խեղճ գիւղացիք դուռ չադատեցան իրենց հարստահարչաց ձեռքէն և վերջապէս յուսահատ և ճարհատ բողբ կը կը բառնան և յանուն մարդկութեան կը խնդրեն որ կառավարութիւն իւր պարտքը կատարէ: Այս անգամի բողբները Եւսեբիոսի Էֆէսիոս գիւղացիք են Հայ և Տաճիկ խառն, որք իրենց բողբագիրն ուղղած են առաւելորդական փոխանորդն գաւառիս (վստահ ինչպէս գիտեք, Ս. Առաջնորդը բացակայ է այս պահուս): Տեսնենք կառավարութիւնը այս անգամ ալ դժուարութիւն մը պիտի հանէ՞ հաւատալու համար, վստահ իւրիշ Տաճիկներէ զատ նոյն իսկ գիւղիկ Տաճիկ Մուսթաֆա ալ կնքած է իւր կնքով զբողբագիրն: Ընթերցողք կրնան երեւակայել թէ ո՞րչափ դուռն ըլլալու է այդ խեղճ գիւղացուց վիճակին, որ նոյն իսկ Տաճիկը Տաճիկացի դէմ կը վիլային պաշտօնական կերպով:

պիսի, Այս երեւոյթը սովորական չէ մեր երկրին մէջ, Դոցա հարստահաւ ընդհանրէն Սիւրբազանցի «աշխարհ» որոց մեղեքանդութիւնն ու բարարարութիւնը այս կողմերը ամենուրեւ ծաւնօթ են: Սօքրատի մը անհրաժեշտութիւններ ընդէն յետոյ այս ամառ կը թշնամանան Ադամ Սիւրբազանցի անուն երիտասարդի մը, և մարդիկ կը հաւնեն որ զայն սպաննեն: Սակայն երբ այս կերպով չեն յաջողիր, քանի մը հօգի միացած կը յարձակին վերջինը եւս Սիւրբազանցի վրայ և կը կողոպտեն, բայց ինչպէս կ'ըլլայ՝ Ադամ կը յաջողի փախչիլ նոցա ձեռքէն:

Չարագործք ետ չեն կենար իւրենց նպատակէն և վերջին օրերս կը յարձակին նորա ազգականաց վրայ, կը բռնեն երեքը կը կապեն և իրենց հետ լեռը կը տանին, որոց վիճակը այժմ ինչպէս ըլլալը ոչ ոք գիտէ: Սակայն գիւղացիք կը խորհին որ իմացնեն այդ դէպքը և վերջինքաւ բողոքը խմբագրելով քաղաք կը բերեն փոխանորդը թաղերիով մը Դուռը զրկեց գործըն: Տեսնեմք թէ վսեմ Սըրբի վաշայի գործունէութիւնն ու արդարաւորութիւնը պիտի յաջողին գտնել զայնցաւորներն և պատժել զանոնք յօրինակ այլոց: Սպասելով գործին փախճանին Միամ. . .

Ձեռք բերեցէք ձեռք ձեռք

ՈՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

ԺՈՂՈՎԱՐԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆԱՅ

ՅԵՒՍԿԻՏԱՐ

. . . Խմբագիր .

Կիրակի օրը հետաքրքրութիւն ունեցայ թաղիս եկեղեցւոյն յարակից Բողոքականաց Ժողովարանն այցելելու և կիրակներեայ արարողութեանց հանդիսատես ըլլալու: Ինչ որ տեսի և զգացի, կուգեմ համառօտիւ հրապարակել, ոչ եթէ կրօնական վիճաբանութիւն յարուցանելու և կամ մեր Բողոքական համագործակցութեան խմբակը մտօք, որ քաւ յինէն, այլ պարզապէս զգացածս այլոց հաղորդելու մարդկային բնազդովս գրեցեալ:

Ինչպէս յայտնի է, Ամերիկեան Բողոքականաց արարողութիւնը շատ պարզ են. մէկ երկու գոհարանական աղօթքներ կարգաց Պատուելին, մէկ երկու նոյնպէս գոհարանական երգ երգեց ժողովուրդը և քարոզ խօսակցեալ: Գոհարանական աղօթքներն, որոնք երգուց նման Անգղիկոսական թարգմանութիւնք կերէին, գրեթէ յարեւմտեան էին մեր եկեղեցեաց մէջ առաւօտ և երեկոյ կարգացում քարոզներուն և մարդիկ թանքներուն, որպիսիք են «Գոհանամք զքեզ տէր Աստուած մեր, փառաւորեմք զքեզ տէր Աստուած մեր» և, սա տարբերութեամբ որ ասոնք գրաբառ են, մինչ Բողոքականացը աշխարհաբառ էին: Եւ երկրորդը որ մերթնները թէ՛ ոճի վտանգութեամբ և թէ՛ իմաստից ուժով անհամեմատ աւելի գերեզման և սքրտառուչ են քան զայն: Եւ ասիկա զարմանալի չէ. մեր ախնեաց ամենէն ծաղիկաւ մատենագրութիւնն եկեղեցական ժամատացութեանց մէջ կը գտնուի. իսկ երգերն ո՛րքան անլի և ցամաք պիտի երեւէին այն անձանց առջեւ, որք ներքէն Շնորհաւոյ, Սահակայ Պարթեւի և այլոց քերթած գեղահիւս և վսեմ շարականները, նոյնպէս Չարթիք փառք իմքը, «Առաւօտ լուսոյն, Մեծ պահոց երգելը և այլն լաւ և ուսումնասիրած են, տաղք և շարականք, որ անհա-

ւատին և անտարբերին իսկ քաղցր կուգան ի լսելին և քրտի թեւերուն կը դալին, և որք եթէ թարգմանուելով Պարտ ընկերութիւնը կազմող անկանայ տարուէին, նոքա ալ թերեւս չվարանէին զայն ի կիր առնուլ: Ըսի մտովի. եթէ այս է, ինչ հարկ խումբ մ'ազգակցաց բաժնուիլ յազգային միութենէ և թողուլ զանկախ ազգային եկեղեցին հնաւոր, մինչ այսօր ազգային անկախ եկեղեցի չունենցողք իսկ մեծ ջանքով հաստատելու կը ճգնին, ինչպէս ըրին Պալլարք, եթէ աղօթք և մարդիկ կուգին, եկառաւօտ Ժամերգութեանց Ժամանակ և լաւ. եթէ երգ կուգին՝ նոյնպէս. եթէ պատարագի կամ խաչահանգստի և այլն չեն հաւատար, դեռ այն միջոցին, ո՞վ կարգելու ըզքեղ. եթէ չեն ուզեր որ նշնեցեալ քահանայք վերցնեն, մի վերցնել տալ նոցա և այլն: Արդէն անցան այն ժամանակներն, ուր պահոց օր ու ախր ուսողը Պատրիարքարանի մէջ կը գտնուէին. խղճի ազատութիւնը ամեն տեղ կը տիրէ այժմ, կրնամ ըսել թէ Հայոց մէջ առաւել իսկ քան ինչ ինչ աւելի բողոքականաց մէջ, որ այլազաւանից անգամ կիրակի օրը կրպակ բռնալ չեն տար իրենց երկրին մէջ:

Դարով քարոզին, զոր Պատ. Կարապետ խօսեցաւ, նիւթն էր բնագէտ գարուս անհաւատութեան, որ Հայոց մէջ ալ հետզհետէ տարածուելու վրայ է եղեր: Անշուշտ լաւագոյն է այսպիսի նիւթեր ընտրել, քան ազգակցաց կրօնական կարծեաց և արարողութեանց դէմ յարձակիլ կամ խմբել զայն, և մեք ուրախ եմք որ Պատուելին, որ բարեկիրթ անձ մը կերէի, բնաւ որ և է ծանր ակնարկութիւն չըբաւ ընդդէմ Հայոց եկեղեցւոյ: Գեղեցիկ և համոզիչ է ին իւր խօսքերն ու առարկութիւնները, դժբաղդաբար մեծաւ մասամբ ճշմ. չէին: Չարմացող երբ տեսայ որ ամենակրօնական կաթողիկոսի մը նման գառափետեց 89ր Գաղղիական մեծ յեղափոխութիւնը, որ սակայն իւր գեղծութեան ճանգերձ՝ առաւ ջին դարկը տուաւ հաւատարմութեան, խղճի ազատութեան և այլ նմանօրինակ անմահ սկզբանց, որում անուգղապէս կը պարտի այսօր բողոք եւրոպայ իւր սահմանադրական և երեսփոխանական գրութիւնները, որ պատճառ եղաւ բարբարոսական տանջանքները և հաւատարմութիւնները ջնջելու, և այլն, և այլն, որուն երկրորդական պէտք էին լինիլ դէթ բողոքականք, զի այն յեղափոխութիւնն էր որ Բողոքականաց ազատութիւն շնորհոյ նանթի հրովարտակըն ետ առնալ իշխանութիւնը տապալեց, և որոյ ներքնած գաղափարաց շնորհիւ հետզհետէ բարձան յեւրոպայ կրօնական հալածանք և պատերազմութեան, և մտաւ ոգին կրօնական թողութեան, եթէ գեղծութեան և արեւնհեղութիւնք եղան, ո՞ր կրօնական կամ քաղաքական յեղափոխութեան մէջ չեն եղած. . . : Նոյն իսկ բողոքականութեան պատմութիւնը ի Գերմանիա և Անգլիոյ, ի Գաղղիա և այլուր՝ արեւմտից էջեր չընկերացաներ միթէ ընթերցողին:

Պատուելին տեսնաբանութիւնը շարունակելով այնպէս մը ներկայացուց ունկնդրաց, իրը թէ՛ աւետարանական գրութիւնն ընդունող ժողովուրդը և անհատք մէկ մէկ մարմնաւոր հրեշտակներ կը դառնան եղեր. ալ անբարոյականութիւնը, միութիւնը, նենգ, կոխ և այլն անոնց համար չեն եղեր. . . : Սյո

տեղ Պատուելին փափաքը իրականացնելու տեղ կ'աւանդէր, Հաւատարմութեան Լոնարայի և Նիւ-Եօքսի մէջ չեն վստար գրադանահատներ, անբարոյական կանայք, ինքզինքնին վերջին ծայր արեւելութեան տուող անձինք. հաւատարմութեան սուղ անհեղք, տուելութիւնը, ոճիրները բարձուած են յաւատարանական Սմերթիկէն և յԱնգլիկէն, և կամ նուազ են քան ի Գաղղիա կամ Ռուսաստան, հաւատարմութեան մէկ անհաւատութեան երկրորդ գրախաղաք ձած են բողոքական երկիրներն, աւելի շատ դժուար է իրաց ստուգութեան վերահասու եղողին:

Պատուելին դեռ ուրիշ բաներ ալ խօսեցաւ անհաւատութեան դէմ, մինչ ես անձամբ անձին կը հարցնէի թէ՛ արդեօք բողոքականութիւնը իւր հաւատարմաց վերաբերեալ խնդիրները ընդունութեան առնելու դրութեամբն ամենէն աւելի չէր օգնէր անհաւատութեան յառաջդիմութեանը, և վերջացոյց խօսքը մաղթելով որ Հայաստանի մէջ օր քան զօր աւելի տարածի Աւետարանի լոյսը. . . : Շիտակն ըսելով այս տեղ չկրցի ժպտաւ բռնել: Աւետարանը սաւրածել այն երկրին մէջ, որ ժե գարէ ի վեր զայն ընդունած և ամեն ինչ մտնալով և վրայ աղաղակ անոր փառած կեցել է: Աւետարանը և Աստուածաշունչը տարածել այն ազգին մէջ, որոյ տիկնայք անգամ ամեն օր Սաղմոս և Աւետարան կը միմեջէին բանտից մէջ ըստ Նիլիէն, և այնպիսի ժամանակ, ուր Ամերիկա վայրենութեան մէջ կը թաւալէր և Անգլո-Սաքսոնք թանձր կռապաշտութեան մէջ կը հեծէին յեւրոպայ: Աւետարանը տարածել այն ազգին մէջ, որ դարաւոր կենդանի նահատակ մ'էր իրաւունքութեան, որոյ եկեղեցեաց մէջ՝ յիւրաքանչիւր ժամերգութիւնըս, ոչ թէ բողոքականաց նման միքանի հատուած, այլ ամբողջ գլուխներով Աւետարան, Մարգարէութիւնք և Աւաքերոց թուղթք և երեսներով Սաղմոս կը կարգացուին. այն ազգին մէջ, որոյ տուններն և դպրոցները, մանաւանդ ի գաւառըս, մինչև ցարդ Սաղմոս, Գործոց և Աւետարանէն աւելի շատ բան չը կայ. և վերջապէս Բողոքականութիւնը տարածել անոնց մէջ՝ որ իրենցմէ շատ յառաջ բողոքած են պապերու պահանջմանց և կաթողիկոսական գեղծմանց դէմ, — ասիկա արդարեւ ժպտելի է ըստ մեզ: Ո՛հ, ո՛ւր էր թէ պատուելի միտիօնարք՝ փոխանակ Հայոց մէջ դեռեղութեան, ուր պէտք չկայ իրենց ներկայութեան խեղճ Հայ ժողովուրդը կեղեքող փերգեքուն ու Ձերքեղեքուն մէջ երթալին յառաքելութիւն, իրենք որ դրամ ունին, լեզունք դիտեն, Անգլիկական պաշտպանութիւն կը վայելին, և լուսաւորէին այդ ազգերը. . . : ստուգիւ մարդկութիւնն առ հասարակ և մեք ազգովին երախտապարտ պիտի լինէինք իրենց: Բայց զայդ չընելու չափ խահեմութիւն ունին. . . :

Շատ ուրիշ բաներ ալ կրնային ըսուիլ այն տեսնաբանութեան վրայ՝ բայց արդէն յօդուածս բաւական երկար ըլլալուն՝ բաւ կը հա-

(*) Զորօրինակ Հնդկաստանի, Չինաստանի և Զուլուստանի մէջ բողոքականութեան յառաջդիմութիւնը յիշեց (սիւս), բայց միթէ հեռաւոր տեղերու վրայ խօսելն աւելի, որոց վրայ ունկնդիրք տեղեկութիւն չունին, լաւագոյն չէր ըլլար որ յիշեր թէ ո՞րքան յառաջադիմած է նա մեր չորքը դանտոյ Մահմետականաց և չորքից մէջ:

մարմնը այսքանը՝ սա միայն յաւելելով ի ծանօթութիւն ընթերցողաց թէ Պարտ ընկերութիւնը հիմնեալ է յԱմերիկայ ի բարեսէր տիկնոնց՝ քրիստոնէութիւնը տարածելու անհաւատ և հեթանոս երկիրներու մէջ. թէ Ամերիկացիք առ հասարակ և Եւրոպայի մէջ տակաւին շատեր գրեթէ բնաւ ծանօթութիւն չունին Հայոց պատմութեան և ներքին վիճակին վրայ, և Տաճկաստանի ժողովուրդը, մանաւանդ Ասիական մասին, առ հասարակ մահմետական կը կարծեն, և ասոր համար է որ Տաճկաստանի մէջ ալ յատուկ առաքելութիւն սահմանած են բայց պատուելի Միտիօնարք՝ տեսնելով որ տեղական իշխանութիւնը կարգելու մահմետականաց մէջ հաւատոյ տարածումը, և եթէ չարգելու իսկ, սորա ստատիկ յարեալ են իրենց կրօնին (ինչպէս Հնդկաստանի մահմետականաց փորձը կը ցուցնէ) նոյնպէս ևս Հրէայք և Յոյնք, Հայոց մէջ դեռեղութիւն աւելի դիւրին և պատշաճ սեպած են: Բայց յայտ է թէ ամենէն դիւրին բանն ամենէն պատուաւորը չէ:

Հրոյ

ՆՈՒՆՈՒՑՈՒՄ

Ս. Երուսաղէմայ վաղգիքէն իւսկիւտար վանքին այգին Գաղղիստան ճատտէսի 11 թիւ միայն մեծ տունը, որ 330 կանգուն տեղ է, վաղգիկ կողմանէ ծախու է. ուստի ո՞վ որ կուգէ՝ մինչև յառաջիկայ հինգշաբթի օր պէտք է յետապահեմ տուն գալ: 22 նոյ 1879 6-10

Ի Լ Ա Ն

Փոյ ԴՆ ԴԵՅԵ			
10	6	2000	Գաֆա բարչառը .
10	5	4000	Պէյթօք քէօնէլէ բարչառը .
20	1	4000	Երալը բարչառը .
30	1	2500	Քէօնէլէ դըրընթըր .
30	1	1500	Մէշին փարչառը .

Պէյթօք Տէպաղիսանէսինտէ Սիւթէրաքիմ ֆիրուսթ օլունաճադ օլուն պէր վէճի թալմին պալատէ մուրագամ էշեանըն պահալը սիմ մէճիսին երկրի դըրընթըր միջ վէճէ արնուպ պալատէ մէջընը էշեա դըրըրընագ շարթիլլէ վէ ֆիլայթը մուրագամէլէրիլլէ թալի օհօտէսինտէ օլուպ քեանունի էվլէլին իւշիւնիւ բաղար իրթէսի կիւնի թէքար միւլայիստէսի թալ օլունաճաղընտան իշթիլարտըն իմալ օլունաճաղըն էշվի մէջընըրտէ Տարի Շուրայի ասքըլլէ կէլմէլէրի: 1879 թըլընի սանի 29 Պապը Սէրասքէրի


Ձեյթուն պուրնու ֆապրիգալը տալիլլիտէ սէպլէլիք վէ էշմիլլիք վէ պաղը հալի օլուն պաղէ իրի սէնէ միւտտէլլէ չէրայիլթի մուգարըրէսինլլէ իմալ օլունաճաղընտան վէ սէնէվի էլլի տտէտ իրայի Օսմանի իմալը իլլէ թալիպի օհօտէսինտէ օլունաճաղընտանի էվլէլին պիլիսին ծիւմա իրթէսի կիւնի միւլայիստէսի պիլ իմալ դարաղը դաթիլի վէրիլլէլլէլլիտէն, տահա պիտէ իմալ իլլէ իսթիմարիլլէ թալիպ օլունաճաղըն էշվի մի մէջընըրտէ Տարի Շուրայի ասքըլլէ կէլմէլէրի: 28 թըլընի սանի 1879 Պապը Սէրասքէրի

(*) Նորահասները անհաւատ կրնան ըլլալ, բայց ոչ բնաւ Քրիստոնէայ:




ԱՆՆԵՐԻ ՎԻԿՏՐԵ

Ով որ իր մազերուն թափիլը չուզեր, «Աննեի վիկտրա» կոչուած մազի անուշահոտ ջուրէն դորձած ելուէ ուրիշ տմեն տեսակ մազի ջուրերը կամ իւզերը որ մազ չի թափելու համար կը ծախսուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ վիկտրի օգուտը միւլիօնաւոր յորձերով տեսնուած է, և Պօլսոյ ու Գաւառացի սէջ օր օրի դորձած ուղիներուն թիւը կ'աւելնայ: Անոնք որ իրենց մազերուն գեղեցիկութիւնը կորսնցնելու վրայ են, շուտով դորձած են ալ ջուրէն որ ի վերջոյ չղջնան: Թափելու վրայ եղող մազերը կը հաւատալէ ու կ'ամրապնդէ, թափածներուն տեղը մազ կը բաւայնէ երբոր մազերուն տրամադր փոխուած չէ, ու ճերմակած մազերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ, դորձած ելուն կերպը շիշերուն հետն է. կը ծախսուի կ'. Պօլսոյ Ղալաթիա Միլիտան և Ընկերաց Ամերիկայի Մազաղան:



ՕՃԱՌ

Անուշահոտ օծաւ, մորթը կը կապուղցնէ, ու լեզի ջուրով ալ կը փերս փերի, տեսակը խիստ ազնիւ ու գինը շատ ատան է. կը ծախուի կ'. Պօլսոյ Ղալաթիա Միլիտան և Ընկերաց Ամերիկայի մազաղան:



ՇԻՐԱԲԵՐԻԻԱՅՐԻԷԻ

ՇՈՂԵՆԱՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՆԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ԴԵՆՏԵՐԵՐ 1 ՇԱՐԱԹ ՕՐԵՆ ՍԳՍԵԱԼ

ՄԻՆԶԵՆ ԴԵՆՏԵՐԵՐ 3

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱՆԵՐԸ

ժամ	Իւրեւնիս ԷճԻՆ ԴԵՆՏԵՐԵՐ
2 15	Արեւմտ. վանիք. ջէնկէլ. Պէյ. Գուզի. Գալաթի:
2 45	Պէյթօղ, Բաշապ. Գաւի. Ա. Հիսար, Գանա. Վանիք. ջէնկ Պէյ. Գուզի.
2 15	Ենիմար. Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Ենիք. Սիւն. Պօլսոյ. Բաշապ. Գաւի. Ա. Հիսար, Գանա. Վանիք. ջէնկէլ. Պէյթիւք. Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
2 30	Արեւմտ. ջէնկէլ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
2 45	Բ. և Ա. Գալաթի. Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Պէյթօղ, Բաշապ. Բ. Գ. մահ. Գաւի. Ա. Հիսար, Գանա. Վանիք. ջէնկէլ. Պէյթիւք. Գուզի. Գալաթի:
3	Ենիմար. Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Ենիք. Եմիրի. Բ. Հիսար, Պէյթիւք. Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
4 15	Ենիմար. Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Ենիք. Սիւն. Եմիրի. Պօլսոյ. Բաշապ. Գաւի. Ա. Հիսար, Պէյթիւք. Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
5 30	Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Ենիք. Եմիրի. Բ. Հիսար, Պէյթիւք. Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
6	Պէյթօղ, Բաշապ. Բ. Գ. մահ. Գաւի. Ա. Հիսար, Գանա. Վանիք. ջէնկէլ. Պէյ. Գուզի. Գալաթի:
7	Ենիմար. Պէյթիւք. Թարապ. Պէյթիւք. Ենիք. Եմիրի. Գանա. Ա. Բ. Հիսար, Գանա. Արեւմտ. ջէնկէլ. Պէյ. Օրթաք. Գուզի. Պէյթիւք. Իւսկիւտար:
7 30	Ա. և Բ. Գալաթի. Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Պէյթօղ, Ենիք. Եմիրի. Բ. Հիսար, Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
8 45	Պէյթիւք. Թարապ. Պէյթօղ, Բաշապ. Բ. Գ. մահ. Գաւի. Ա. Հիսար, Գանա. Վանիք. ջէնկէլ. Պէյ. Գուզի. Իւսկիւտար.
8 45	Ենիմար. Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Ենիք. Սիւն. Պօլսոյ. Բաշապ. Գաւի. Ա. Հիսար, Պէյթիւք. Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
10	Ենիմար. Մէջարալ. Պէյթիւք. Թարապ. Ենիք. Եմիրի. Բ. Հիսար, Արեւմտ. Օրթաք. Պէյթիւք.

ԿԻՐԱԿԻ ԵՆԻՂ ԴԵՆՏԵՐԵՐ

3 30	Գալաթի, Իւսկիւտար. Պէյթիւք. Գուզի. Օրթաք. Պէյ. ջէնկէլ. Արեւմտ. Գանա. Ա. Բ. Հիսար, Գանա. Եմիրի. Ենիք. Պէյթիւք.
4 30	Իւսկիւտար, Գուզի. Պէյ. ջէնկէլ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանա. Բ. Գ. մահ. Գաւի. Պէյթիւք. Պէյթօղ.
3 45	Պէյթիւք. Օրթաք. Գուզի. Արեւմտ. Պէյթիւք. Բ. Հիսար, Սիւն. Ենիք. Թարապ. Մէջարալ. Պէյթիւք.

4 45	Գալաթի, Պէյթիւք. Օրթաք. Արեւմտ. Պէյթիւք. Բ. Հիսար, Եմիրի. Ենիք. Պէյթիւք. Պէյթօղ. Պէյթիւք. Մէջարալ. Բ. և Ա. Գալաթի.
5 45	Պէյթիւք. Օրթաք. Արեւմտ. Գանա. Բ. Հիսար, Եմիրի. Ենիք. Թարապ. Պէյթիւք. Մէջարալ. Ենիք. Սիւն. Պօլսոյ. Բաշապ. Գաւի. Ա. Հիսար, Գանա. Վանիք. ջէնկէլ. Պէյթիւք. Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
6 30	Իւսկիւտար, Պէյթիւք. Գուզի. Օրթաք. Պէյ. ջէնկէլ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանա. Բ. Գ. մահ. Գաւի. Պէյթիւք. Պէյթօղ. Թարապ. Պէյթիւք.
8	Պէյթիւք. Օրթաք. Արեւմտ. Պէյթիւք. Բ. Հիսար, Եմիրի. Ենիք. Թարապ. Պէյթիւք. Մէջարալ. Ենիք. Սիւն. Պօլսոյ. Բաշապ. Գաւի. Ա. Հիսար, Գանա. Վանիք. ջէնկէլ. Պէյթիւք. Արեւմտ. Գուզի. Օրթաք. Պէյթիւք.
9 30	Պէյթիւք. Օրթաք. Գուզի. Արեւմտ. Պէյթիւք. Բ. Հիսար, Պօլսոյ. Ենիք. Պէյթիւք. Թարապ. Պէյթիւք. Մէջարալ. Բ. և Ա. Գալաթի.
10	Գալաթի, Գուզի. Պէյ. ջէնկէլ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանա. Բ. Գ. մահ. Գաւի. Պէյթիւք. Պէյթօղ. Թարապ. Պէյթիւք.
10 30	Պէյթիւք. Օրթաք. Գուզի. Արեւմտ. Պէյթիւք. Բ. Հիսար, Եմիրի. Սիւն. Ենիք. Թարապ. Պէյթիւք. Մէջարալ. Ենիք. Սիւն. Պօլսոյ.
11	Պէյթիւք. Օրթաք. Գուզի. Արեւմտ. Պէյթիւք. Բ. Հիսար, Եմիրի. Ենիք. Թարապ. Պէյթիւք. Մէջարալ. Ենիք. Սիւն. Պօլսոյ.
11	Գուզի. Պէյ. ջէնկէլ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանա. Բաշապ. Պէյթօղ.
11 30	Պէյթիւք. Գուզի. Օրթաք. Պէյ. ջէնկէլ. Արեւմտ.
12	Պէյթիւք. Օրթաք. Գուզի. Արեւմտ.

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱՆԵՐԸ

Իւրեւնիս ԷճԻՆ ԴԵՆՏԵՐԵՐ	ԿԻՐԱԿԻ ԵՆԻՂ ԴԵՆՏԵՐԵՐ	Իւրեւնիս ԷճԻՆ ԴԵՆՏԵՐԵՐ
ժամ	ժամ	ժամ
		8 30
		8 50
		9 20
2 30	8 45	9 30
3	8 35	10 10
3 30	9 40	10 45
3 50	9 35	11
4 20	10	11 20
4 30	10 25	11 40
5 10	10 45	11 50
5 40	11 5	12 5
6 15	11 25	
6 45	11 40	
7 20	12	

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իւրեւնիս ԷճԻՆ ԴԵՆՏԵՐԵՐ	ԿԻՐԱԿԻ ԵՆԻՂ ԴԵՆՏԵՐԵՐ	Իւրեւնիս ԷճԻՆ ԴԵՆՏԵՐԵՐ
ժամ	ժամ	ժամ
		6 35
		8
		8 45
2 30	8	9 20
	8 45	10
	9 20	10 30
3 5	10	11 5
3 40	10 30	11 35
4 15	11	12 5
5	11 30	
5 30	12	
6 5		

ԽՈՐԱԳԻՐ-ՏՆՕՐԵՆ
Կ. Ս. ԻՒՍԿԻՒՏԱՆ

Սոյն գործարանին համարը աշխարհածանօթ է: Մինչև ցայսօր եղածներուն վերջոյ ամեն կերպով գերազանց լինելն անհամար վկայներով և բազմաթիւ միջանակներով հաստատուած է:

Ճորձ Երայի տրուած վկայականներէն հետեւեալը յառաջ կը բերեն, ազգայ հասարակութեան դատողութեան թողով:

ՍՈՍԿԱԼԻ ԶՐԳԻՆ
Ի Ռիօ Ենիքիս


Տէր. — Իմ կարեւորագոյն վերաբերող հարց ճորձի եղան և դժբաղդաբար ապագայ հոգած չէի ոչ գաղթելու ոչ աղքատներու: Սակայն ձեռն գտած Արիկանուրա լաւ ցած ծամանակ տեսողներու և թղթերու ամբողջական անվնաս դադար, որուն համար երախտագրութեամբ եմ ձեռք:

Ձեր Արիկանուրին ձերք քով ուրիշ, ո՞ր կար, որ Պ. Գոյն (Goyen) գործարանէն ելած էր. այս վերջինն մէջ գտնուած անորոշներէն և կարեւոր թղթերէն ամենքն ալ այրած էին, մինչդեռ ձեր Արիկանուրին, որուն մէջ կը գտնուէր լաւ տեսողներէն և թղթերէն 10 լիպրա (որ ըսել է 5 1/2 օնսայն աւելի) վաւառի, որը պահած էի հոն կառավարութեան հետ անկի ունենալը գործի մէջ կրնայի:

Հորդեմէն երկու օր վերջը երբ Բոլիւք լաւացաւ ձեր Արիկանուրը թէ վաւառը և թէ Արիկանուրին ներքին կողմը բոլորովին անվնաս գտաւ. նա մանաւանդ վաւառը որ ձերք մեծ նպաստ վնասուի մէջ էր ինչ որ էր հորդեմէն առաջ:

Ռիօ Ենիքիս
8 օգոստոս 1888
(Ստորագրեալ) Կ. Սոսկալի

Աւելի ընդարձակ տեղեկութեանց և վկայականներու վաւերացման համար, պէտք է դիմել առ ՅՈՎ. ՀԱՆՆԵՐՍՈՒՄՈՒՄԻՆ Գլխավոր գործարանին յատուկ գործարանին Տնօրէնութեան և Պաշտօնէին համար, Ատա լաւ թիւ 3 և կամ առ Պ. Մ. ՊԱՆԻՍՆ, Կառավարութեան Ատա լաւ թիւ 1:



ՊԵՐՈՒՄԻՐ ԵՐ ԲԱՆԱԼԻՆԵՐ ԱՆԳՂԱՅԻՆ
NEC PLUS ULTRA
ԱՆԱՆԻՄ
ՃՈՐՃ ԲՐԱՅՈՒ
(George Price)
ՏԵՆԵՐԱԶՈՔԱԿԻ ԵՐ ԱՆԵԱՂԱՅԻՆ ԵՐԱՊԵՐԱՇԽՈՒՆ ԵՐ ՊԵՐՈՒՄԻՐ
ԱՆԳՂԱՅԻՆ ԱՐԴԱՅԻՆ
(ԳՕՅԻ-ՅՕԻ)
ԱՆԵՐԱՇԽՈՒՆ ԵՐ ԲԱՆԱԼԻՆԵՐ ԵՐ ԿԱՐԵՎԱՆԱԿԱՆԻՆ
40 Տարեկ աւելի հաստատուած:

ՓԱՐԻՉՈՒ ՏԵՆԵՐԱԶԱԿԱՆ ԱՐՈՒՆԵՐԱՇԽՈՒՆ ԴԵՍ 1878: